



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝*

Կրտսեր դպրոցականների իմացական  
կարողությունների զարգացման  
առանձնահատկությունները

*Առարկան՝* Տարրական կրթություն և մեթոդիկա

*Հետազոտող ուսուցիչ՝* Գայանե Բալբաբյան

*Ուսումնական հաստատություն՝* «Չարենցավանի N2 հիմնական դպրոց»  
ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն** -----3

Երեխայի դպրոցական կյանքի սկզբնական շրջանի առանձնահատկությունները ---4

Կրտսեր դպրոցականի անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները -----4

Դպրոց ընդունվելու հետևանքով երեխայի մեջ առաջացած հոգեբանական վերակառուցումը -----5

Առաջին դասարանցիների դժվարությունների հիմնական տեսակները -----6

Հոգեբանական նորագոյացությունները կրտսեր դպրոցական տարիքում -----8

Կրտսեր դպրոցականների իմացական պրոցեսների զարգացումը -----9

Կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման ռեզերվների մասին -----12

Կրտսեր դպրոցականի անձնավորության զարգացումը, բարոյական նորմերի և վարքի կանոնների յուրացումը -----12

Կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունները միմյանց և ուսուցիչների հետ -----13

Կրտսեր դպրոցականի հույզերն ու դրանց զարգացումը -----13

**Հետազոտական մաս** -----15

Կիրառված մեթոդների, օգտագործված մեթոդիկաների և կատարված հետազոտության նկարագրությունը -----15

«Ռավենի մատրիցներ» մեթոդիկան -----15

«Ռուբիկի կուբիկ»-ը մեթոդիկան -----16

Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը -----17

**Եզրակացություն** -----19

**Օգտագործված գրականության ցանկ** -----20

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յուրաքայուր տարիքային խումբ յուրահատուկ է իրեն բնորոշ առանձնահատկություններով: Առանց այդ առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրության հնարավոր չէ արդյունավետ կազմակերպել ուսուցման և դաստիարակության գործընթացը:

Կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունների վրա հենվելով ցանկալի արդյունքներ գրանցելու համար տարրական դասարանների ուսուցիչներին անհրաժեշտ է քաջատեղյակ լինել տարիքային հոգեբանության նրբություններին:

6-7 տարեկան հասակը լավագույնն է համարվում հիշողության, ուշադրության, մտածողության, երևակայության, հույզերի և անձի ձևավորման մյուս գործընթացների զարգացման համար, և մանկավարժը բացառիկ հնարավորություն ունի նպատակաուղղված ազդելու այդ բոլոր գործընթացների զարգացման վրա:

Մեր հետազոտության օբյեկտն է հանդիսանում կրտսեր տարիքի դպրոցականի հոգեկան զարգացման ողջ համակարգը՝ մասնավորապես մտածողությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը հոգեբանամանկավարժական այն պայմաններն են, որոնց ստեղծումը ապահովում է սովորողների նպատակաուղղված ինտելեկտուալ զարգացումը: Հետազոտության գործնական նշանակությունն ընտրված մեթոդիկաներով կրտսեր տարիքի դպրոցականների մոտ ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր մտածողության զարգացման աստիճանները չափելն է և դրանց արդյունքները համեմատելը:

Անց է կացվել կրտսեր տարիքի մտածողության վերաբերյալ տեսական, համալիր վերլուծություն, ուսումնասիրվել է մեծ թվով գրականություն:

**Երեխայի դպրոցական կյանքի սկզբնական շրջանի առանձնահատկությունները**

Դաստիարակության ժամանակակից համակարգում կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է երեխայի կյանքի վեցից մինչև տասը տարեկան հասակը (դպրոցի I-IV դասարանները): Վեցից մինչև տասը տարեկանն ընկած շրջանի ամենաբնորոշ գիծն այն է, որ այս տարիքում նախադպրոցականը դառնում է դպրոցական: Սա անցման այնպիսի շրջան է, որտեղ երեխան իր մեջ միաժամանակ կրում է ինչպես նախադպրոցականի, այնպես էլ դպրոցականի գծեր: Այս որակները նրա վարքում և գիտակցության մեջ գոյակցում են բարդ և երբեմն էլ հակասական գուգորդությունների ձևով: Ինչպես և անցման ամեն մի այլ շրջան, այս տարիքն էլ հարուստ է զարգացման թաքուն հնարավորություններով, որոնք պետք է ժամանակին ի հայտ բերվեն և զարգացվեն: Անձի հոգեկան շատ որակների սկիզբը դրվում և զարգացվում է կրտսեր դպրոցական տարիքում: Ահա թե ինչու ներկայումս գիտնականները ուշադրություն են դարձնում կրտսեր դպրոցականների զարգացման ռեզերվների բացահայտման վրա: Այդ ռեզերվների օգտագործումը թույլ կտա երեխաներին ավելի մեծ հաջողությամբ նախապատրաստվել հետագա ուսումնական և աշխատանքային գործունեության համար:

**Կրտսեր դպրոցականի անատոմիական և ֆիզիոլոգիական  
առանձնահատկությունները**

Այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում մարմնի բոլոր օրգաններում և հյուսվածքներում: Օրինակ՝ ձևավորվում են ողնաշարի բոլոր երեք կորացումները՝ պարանոցայինը, կրծքայինը և գոտկատեղինը: Բայց կմախքի ոսկրակալումը դեռևս չի ավարտվում, որի հետևանքով այն խիստ ճկուն ու շարժուն է: Արագորեն ամրանում են կրտսեր դպրոցականների մկաններն ու հոդակապերը, աճում է դրանց ծավալը, մեծանում է մկանային ուժը: Ընդ որում խոշոր մկանները զարգանում են փոքրերից ավելի շուտ: Այդ պատճառով երեխաները առավել ընդունակ են կատարելու համեմատաբար ուժեղ և լայնաթափ շարժումներ, իսկ ավելի փոքր և ճշտություն պահանջող շարժումներ դժվարությամբ են կատարում: Մանր մոտորիկայի ուշ զարգացման պատճառով էլ հենց պայմանավորված են կրտսեր դպրոցականի մեծ դժվարությունները գրավոր հանձնարարություններ կատարելիս: Նրա ձեռքի դաստակը արագորեն հոգնում է, և նա շատ արագ և երկար գրելու ի վիճակի չէ: Կրտսեր դպրոցականներին, հատկապես I և II դասարանցիներին, գրավոր հանձնարարություններով ծանրաբեռնել չի կարելի: Եթե երեխաները փորձում են նորից գրել վատ կատարված (տգեղ գրված) հանձնարարությունը, ապա շատ հաճախ արդյունքը չի բարելավվում, երեխայի ձեռքը արագորեն հոգնում է:

Զարգացմանը զուգընթաց գլխուղեղի քաշը նկատելիորեն մեծանում է: Հատկապես աճում են գլխուղեղի ճակատային բաժինները, որոնք մեծ դեր են խաղում հոգեկան գործունեության բարձրագույն և առավել բարդ ֆունկցիաների ձևավորման գործում: Փոխվում է գրգռման և արգելակման պրոցեսների փոխհարաբերությունը: Արգելակումը ավելի նկատելի է դառնում, քան նախադպրոցական հասակում: Բայց գրգռման նկատմամբ հակումը դեռևս շատ ուժեղ է, որի հետևանքով կրտսեր դպրոցականները խիստ շարժուն են:

Այսպիսով, համեմատած նախադպրոցական տարիքի հետ, կրտսեր դպրոցական տարիքում զգալիորեն ամրապնդվում է ոսկրամկանային համակարգը, համեմատաբար կայուն է դառնում սիրտ-անոթային համակարգի աշխատանքը, իսկ նյարդային գրգռման և արգելակման պրոցեսները մեծ չափով հավասարակշռված են դառնում: Այս ամենը բացառիկ կարևորություն ունի, քանի որ դպրոցական կյանքի սկիզբը նշանավորվում է նոր՝ ուսումնական գործունեությամբ, որը երեխայից ոչ միայն զգալի մտավոր լարվածություն, այլև ֆիզիկական մեծ տոկոսություն է պահանջում:

**Դպրոց ընդունվելու հետևանքով երեխայի մեջ առաջացած հոգեբանական վերակառուցումը**

Երեխայի հոգեկան զարգացման յուրաքանչյուր փուլ բնորոշվում է գործունեության հիմնական, առաջատար տեսակով: Օրինակ՝ նախադպրոցական մանկության համար առաջատարը խաղային գործունեությունն է՝ դերային խաղն իր ողջ բազմազանությամբ: Հենց որ վեցամյա երեխան դասարան է մտնում, նա դառնում է դպրոցական: Այս պահից սկսած խաղը նրա կյանքում աստիճանաբար կորցնում է իր առաջատար դերը, թեև շարունակում է կարևոր տեղ զբաղեցնել նրանում: Կրտսեր դպրոցականի համար առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը, որը եական փոփոխություններ է մտցնում նրա վարքի մոտիվացիայում, և նրա իմացական ու բարոյական ուժերի զարգացման նոր աղբյուրներ է բացահայտում:

Նոր կանոններին ու նորմաներին անշեղորեն հետևելու պահանջը ոչ թե առաջին դասարանցիների նկատմամբ ցուցաբերվող ավելորդ խստություն է, այլ նրանց կյանքի կազմակերպման այնպիսի անհրաժեշտ պայման, որը համապատասխանում է դպրոց հաճախելու համար նախապատրաստված երեխաների սեփական դիրքորոշումներին: Երբ այդ պահանջները փոփոխական ու անորոշ են, ապա երեխաները չեն կարողանում զգալ իրենց կյանքի նոր փուլի ինքնատիպությունը, որի հետևանքով կարող է թուլանալ նրանց հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ:

Այսպիսով, դպրոցական կյանքի առաջին փուլի համար բնորոշ է այն, որ երեխան ենթարկվում է իրեն ներկայացվող նոր պահանջներին և սկսում է հետաքրքրվել ուսումնական առարկաների բովանդակությամբ: Ուսուցման այդ փուլի հարթ ընթացքը վկայում է դպրոցական կյանքի համար նրա լավ պատրաստված լինելը: Բայց ոչ բոլոր վեցամյա երեխաներն ունեն այդպիսի պատրաստականություն: Նրանցից շատերը սկզբում զանազան դժվարություններ են ապրում և միանգամից չեն կարողանում լիովին ներգրավվել դպրոցական կյանքի մեջ:

### **Առաջին դասարանցիների դժվարությունների հիմնական տեսակները**

Ամենից հաճախ դիտվող դժվարությունների տեսակներից առաջինը կապված է երեխայի համար դպրոցական անսովոր ռեժիմի հետ:

Մյուսը, որը հաճախակի է հանդիպում առաջին դասարանցիների մոտ, կապված է ուսուցչի, դասընկերների և ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթի հետ: Դասարանում սովորողների փոխհարաբերությունները նորմալ են լինում այն դեպքում, երբ ուսուցիչը հավասարապես պահանջկոտ է բոլոր երեխաների նկատմամբ, երբ թույլերին խրախուսում է աշխատասիրության համար, իսկ ուժեղներին նկատողություն է անում ավելորդ ինքնավստահության համար: Այս ամենը հոգեբանական բարենպաստ ֆոն է ստեղծում դասարանի կոլեկտիվ աշխատանքի համար: Դպրոց ընդունվելու հետ միասին փոխվում է նաև երեխայի վիճակն ընտանիքում: Նա ստանում է նոր իրավունքներ և պարտականություններ:

Դժվարությունների երրորդ տեսակը առաջին դասարանցիներն ունենում են ուսումնական տարվա վերջին շրջանում: Ողջ ուսումնական տարվա ընթացքում սովորաբար պատրաստի ստացած գիտելիքները երեխայի մտավոր որոնումների ասպարեզը խիստ սահմանափակում են, նրա մեջ մարում է ուսուցման նկատմամբ սկզբնական ձգտումը, և վրա է հասնում անտարբերությունը: Ուսուցման պրոցեսում «հագեցման» այդպիսի վիճակը կանխելու ամենահուսալի եղանակն աշակերտներին բավականաչափ բարդ ուսումնաթիմացական խնդիրներ առաջադրելը, նրանց պրոբլեմային իրավիճակների առջև կանգնեցնելն է:

Այսպիսով, դպրոցական կյանքի ոլորտը մուտք գործելու սկզբնական շրջանում երեխայի հոգեկանը լուրջ փոփոխություններ է կրում: Նա ձեռք է բերում կյանքի նոր ռեժիմի հետ կապված կարևոր սովորություններ և փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ է հաստատում ուսուցիչների ու ընկերների հետ: Ուսումնական նյութի նկատմամբ առաջ եկած հետաքրքրությունների հիման վրա նրանում դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ: Այդ հետաքրքրությունների հետագա զարգացումն ու ուսուցման նկատմամբ կրտսեր

դպրոցականների վերաբերմունքի փոփոխությունները կախված են նրանց ուսումնական գործունեության ձևավորման պրոցեսից: Այդ պատճառով մանկավարժական հոգեբանության համար հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպիսին է այդ գործունեության կառուցվածքը, և ինչ առանձնահատկություններ ունեն նրա առանձին բաղադրամասերը:

Ուսումնական գործունեությունն ունի որոշակի կառուցվածք: Նրա բաղադրամասերն են ուսումնական իրադրությունները (կամ խնդիրները), ուսումնական գործողությունները, վերահսկողությունը և գնահատումը: Ուսուցման գործընթացը կազմակերպվում է այնպես, որ յուրաքանչյուր թեմային համապատասխան առաջադրվում են որոշակի խնդիրներ և մշակվում են դրանց լուծման համար անհրաժեշտ ուսումնական գործողությունների մի ամբողջ համակարգ: Այս ամբողջ աշխատանքը անպայման պետք է վերահսկվի թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի, թե՛ ծնողի կողմից: Վերահսկողությունը սերտորեն կապված է ուսումնական գործունեության ևս մեկ բաղադրամասի գնահատականի հետ: Գնահատականը ցույց է տալիս, թե յուրացման արդյունքները ինչ չափով են համապատասխանում ուսումնական իրադրության պահանջներին:

Դպրոցական պրակտիկայում գնահատականը հաճախ նույնացնում են թվանշանի հետ: Հոգեբանական տեսակետից սա ճիշտ չէ: Գնահատականը ցույց է տալիս ոչ միայն նյութի յուրացված լինելու կամ չլինելու փաստը, այլև վերջինիս պատճառները՝ դրանով իսկ աշակերտներին միտելով դեպի թերությունների վերացումը և նոր գործունեության մղելով մինչև այն ժամանակ, քանի դեռ աշխատանքը դրական չի դարձել: Գնահատականը ունի միայն երկու նշանակություն՝ դրական և բացասական: Իսկ թվանշանը ունի մի քանի աստիճաններ և, որպես կանոն, համադրական բնույթ ունի: Այն նշանակվում է ինչպես ուսումնական իրադրության մեջ կատարված միջանկյալ աշխատանքի, այնպես էլ նրանում ողջ աշխատանքի ավարտման համար: Թվանշաններում իր արտացոլումն է գտնում երեխայի աշխատասիրությունը, դասի ժամանակ դրսևորած կարգապահությունն ու գործունեության շատ այլ կողմեր: Թվանշանի այդպիսի բնույթը հիմք է ստեղծում դասի ընթացքում սովորողների կատարած ամբողջական աշխատանքի արդյունքների նկարագրությունը տալու համար:

Բայց այժմ կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության հոգեբանությունը ցույց է տալիս, որ չպետք է չափազանցության հասցնել երեխաների ուսումնական աշխատանքի հնարների և աշխատասիրության ձևավորման գործում թվանշանների ունեցած դերը: Պահպանելով հանդերձ թվանշանների որոշ նշանակությունը, գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել գնահատականի հոգեբանական հնարավորությունների օգտագործման վրա, քանի որ դրանք երեխաների ուսումնական գործողությունների վիճակը բովանդակալից կերպով նկարագրելու միջոցներ են: Այդպիսի նկարագրության հիման վրա ավելի

նպատակասլաց կերպով կարելի է ձևավորել կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության հիմնական բաղադրամասերը: Սա խոսում է ձևավորող գնահատման դերի և կարևորության մասին:

### **Հոգեբանական նորագոյացությունները կրտսեր դպրոցական տարիքում**

Յուրաքանչյուր երեխա իր անհատական զարգացման ընթացքում ունենում է տարիքային ճգնաժամեր, որոնք պետք է հաղթահարվեն՝ առանց երեխայի հոգեկանին լուրջ վնաս հասցնելու: Ա. Ն. Լեոնտևը 6-7 տարեկանի ճգնաժամը բացատրում է նրա առաջատար գործունեությանը և դրանով պայմանավորված նոր սոցիալական հարաբերություններին անցնելու վաղաժամ կամ ուշացած լինելու հանգամանքով. եթե երեխան ժամանակին է անցնում գործունեության նոր տեսակին, այսինքն՝ հոգեբանորեն պատրաստ է լինում նոր գործունեությանը, ճգնաժամն ի հայտ չի գալիս:

Կրտսեր դպրոցականի հոգեկանի զարգացումը տեղի է ունենում գլխավորապես նրանց համար առաջատար գործունեության՝ ուսուցման հիման վրա: Ուսումնական գործունեություն կատարելիս երեխաները աստիճանաբար ենթարկվում են նրա պահանջներին: Այդ պահանջների կատարումը ենթադրում է հոգեկանի այնպիսի նոր որակների առաջացում, որոնք նախադպրոցականների մոտ բացակայում են: Կրտսեր դպրոցականների հոգեկան նոր որակները ծագում ու զարգանում են ուսումնական գործունեության ձևավորմանը զուգընթաց և հիմք հանդիսանում նրանց իմացական կարողությունների զարգացման համար:

Դասարանում միաժամանակյա պարապմունքների կազմակերպումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ բոլոր երեխաները միաժամանակ լսում են ուսուցչին և հետևում նրա ցուցումներին: Այդպիսի պահանջներին մշտապես հետևելը, սեփական վարքը կառավարելը նպաստում է երեխաների հոգեկան ֆունկցիաների հատուկ որակի՝ կամաձիճության զարգացմանը: Այդ որակը դրսևորվում է գործողության նպատակները գիտակցորեն առաջադրելու, դրանց հասնելու միջոցներ որոնելու և գտնելու, դժվարություններն ու արգելքները հաղթահարելու կարողության ձևով:



**Կրտսեր դպրոցականների իմացական պրոցեսների զարգացումը**

• **Ընկալման զարգացումը**

Առանձին հոգեկան պրոցեսների զարգացումը կատարվում է կրտսեր դպրոցական տարիքի ողջ տևողության ընթացքում: Թեև երեխաները դպրոց են գալիս արդեն ընկալման բավականաչափ զարգացած պրոցեսներ ունենալով, այնուամենայնիվ, ուսումնական գործունեության ընթացքում նրա ընկալումները հիմնականում սահմանափակվում են առարկաների ճանաչմամբ և դրանց ձևերն ու գույներն անվանելով: Ընկալվող առարկաները վերլուծելու և տարբերակելու հնարավորությունները կապված են երեխայի գործունեության այնպիսի տեսակի ձևավորման հետ, որը կոչվում է դիտում և հատկապես ինտենսիվորեն է ձևավորվում հենց դպրոցական ուսուցման ընթացքում: Զուգորդվելով իմացական գործունեության այլ տեսակների (ուշադրության, մտածողության) հետ, ընկալումը վեր է անցնում կամաձին ու նպատակամետ դիտման: Եթե դիտելու կարողությունները բավականին զարգացած են, ապա կարելի է ասել, որ երեխան ունի անձնային հատուկ որակ՝ դիտողականություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարրական ուսուցման ընթացքում կարելի է զգալի չափով զարգացնել բոլոր կրտսեր դպրոցականների այդ կարևոր որակը:

• **Ուշադրության զարգացումը**

Նոր դպրոց ընդունվող երեխաները դեռևս նպատակասլաց կերպով ուշադրությունը կենտրոնացնելու ընդունակություն չունեն: Նրանք հիմնականում ուշադրություն են դարձնում այն երևույթների վրա, որոնք անմիջականորեն հետաքրքրություն են առաջացնում և աչքի են զարնվում իրենց անսովորությամբ ու պայծառությամբ (չկանխամտածված, ոչ կամաձին ուշադրություն): Աստիճանաբար երեխան սովորում է ուշադրությունն ուղղել և կայուն կերպով կենտրոնացնել անհրաժեշտ առարկաների վրա, որոնք արտաքինապես գրավիչ չեն իր համար: II-III դասարաններում երեխաներից շատերն արդեն ունեն կամաձին (կանխամտածված) ուշադրություն, որը նրանք կենտրոնացնում են գրքում տրված կամ ուսուցչի կողմից մատուցվող ցանկացած նյութի վրա:

Ուշադրության կանխամտածվածությունը, մտադրությանը համապատասխան այս կամ այն խնդրի վրա ուղղելու կարողությունը կրտսեր դպրոցական հասակի կարևոր ձեռքբերումն է: Ուշադրության զարգացման կողմերից մեկը նրա ծավալի մեծացումն է և տարբեր գործողությունների վրա այն բաշխելու ունակության առաջացումը: Այդ պատճառով ուսումնական խնդիրները պետք է ներկայացնել այնպես, որպեսզի երեխան, իր գործողությունները կատարելու հետ զուգընթաց, կարողանա և պարտավոր լինի հետևել ընկերների աշխատանքին:

- **Հիշողության զարգացումը**

Ուսումնական գործունեության ընթացքում զարգանում է ինչպես կամաձին, այնպես էլ ոչ կամաձին հիշողությունը: Բայց դրանց հարաբերակցությունը ժամանակի ընթացքում փոփոխություններ է կրում: Առաջին դասարանում ոչ կամաձին մտապահման արդյունավետությունն ավելի մեծ է, քան կամաձին մտապահմանը, քանի որ երեխաները դեռևս չեն տիրապետում նյութի գիտակցված մշակման ու ինքնավերահսկողության քիչ թե շատ ձևավորված հնարների: Գիտակցված և իմաստավորված մտապահման ու ինքնավերահսկողության հնարների ձևավորման հետ զուգընթաց II և III դասարանցիների կամաձին հիշողությունը շատ տեսակետներից ավելի արդյունավետ է դառնում, քան ոչ կամաձինը: Սակայն հետագայում այդ առավելությունը չի պահպանվում: Իրականում տեղի են ունենում բուն հիշողության պրոցեսների որակական հոգեբանական ձևափոխություններ: Նյութի տրամաբանական վերամշակման արդեն ձևավորված հնարները բովանդակալից գործունեություն կատարելիս մտապահման խնդիրը հետին պլան են մղում: Տարրական կրթության պրոցեսում տրամաբանական հնարների վրա հիմնված ոչ կամաձին հիշողության հնարավորությունները պետք է լայնորեն օգտագործվեն: Այստեղ է թաքնված ուսումնական պրոցեսներում հիշողությունը կատարելագործելու հիմնական ռեզերվներից մեկը:

- **Երևակայության զարգացումը**

Պլանաչափ ուսումնական գործունեությունը թույլ է տալիս զարգացնել երեխաների այնպիսի մի կարևոր իմացական ընդունակություն, ինչպիսին երևակայությունն է: Վերարտադրող երևակայությունը կրտսեր դպրոցական տարիքում զարգանում է ուսումնական բոլոր պարապմունքների ընթացքում: Կարևոր դեր է խաղում նաև որոշ օբյեկտների, նրանց հատկությունների ու վիճակների պայմանական լինելու հանգամանքը հասկանալու ունակության ձևավորումը: Առարկաների ծագման և առաջացման պայմաններ ցույց տալու ձգտումը, որը նկատվում է կրտսեր դպրոցականների մոտ, նրանցում ստեղծագործական երևակայության զարգացման հոգեբանական կարևորագույն նախադրյալն է: Այդ նախադրյալի ձևավորմանն օգնում են աշխատանքի ուսուցման դասերը, որոնց ընթացքում երեխաները կարողանում են իրականացնել տարբեր առարկաներ պատրաստելու իրենց մտահղացումները: Դրան նպաստում են նաև նկարչության դասերը, որոնք երեխաներից պահանջում են սկզբում ունենալ մտահղացումներ, իսկ հետո որոնել դրանց մարմնավորման առավել արտահայտիչ միջոցներ:

- **Մտածողության զարգացումը**

Կրտսեր դպրոցականների մտածողության զարգացումը ևս ընթանում է երկու հիմնական փուլերով: Առաջին փուլում (I և II դասարաններ) նրանց մտածողությունը շատ կողմերով դեռևս հիշեցնում է նախադպրոցականի մտածողությունը:

Ուսումնական նյութի վերլուծությունն այստեղ առավելապես ակնառու-գործնական բնույթ ունի: Մտածելիս երեխաները հենվում են կամ իրական առարկաների, կամ դրանց փոխարինող պատկերների վրա: Այդպիսի վերլուծությունը երբեմն անվանում են պրակտիկ-գործնական կամ զգայական: Պլանաչափ ուսումնական գործունեության հիման վրա, արդեն III դասարան փոխադրվելու շեմին, կրտսեր դպրոցականների մտածողության բնույթը փոխվում է: Այս փոփոխությունները կապված են զարգացման երկրորդ փուլի հետ. երեխաները ծավալուն դատողությունների միջոցով հաճախ զեկուցում են ուսուցչին, թե ինչպես են յուրացրել այս կամ այն դասակարգումը: Բավականին հաճախակի կատարվող վերլուծահամադրական աշխատանքները մեծապես նպաստում են երեխաների մտավոր զարգացմանը, որն էլ իր հերթին ապահովում է արագ և սահուն անցումը ակնառու մտածողությունից դեպի առավել բարդ՝ վերացական մտածողության:

Հոգեբանության մեջ տարածված է մտածողության տեսակների հետևյալ դասակարգումը.

- 1) *ակնառու-գործնական,*
- 2) *ակնառու-պատկերավոր,*
- 3) *վերացական մտածողություն:*

Երեխաների գործնական և ակնառու զգայական փորձերի հիման վրա դպրոցական հասակում նրանց մոտ զարգանում է (սկզբում պարզագույն ձևերով) վերացական, այսինքն՝ աբստրակտ հասկացություններով կատարվող մտածողություն: Այստեղ մտածողությունը հանդես է գալիս ոչ միայն պրակտիկ գործողությունների և ոչ էլ միայն ակնառու պատկերների (ըմբռնումների, մտապատկերների), այլ, ամենից առաջ, վերացական հասկացությունների և դատողությունների ձևով: Դպրոցական ուսուցման վերջում երեխաների մոտ այս կամ այն չափով հասկացությունների համակարգ է ձևավորվում: Դպրոցականների մոտ հասկացությունների յուրացման ընթացքում վերացական մտածողության զարգացումը բոլորովին էլ չի նշանակում, որ նրանց ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր մտածողությունը այժմ դադարում է զարգանալուց կամ ընդհանրապես չքանում է: Ընդհակառակը, մտածական գործունեության այդ առաջնային և ելման ձևերը առաջվա նման շարունակում են փոփոխվել ու կատարելագործվել՝ զարգանալով վերացական մտածողության հետ միասին և նրա հետադարձ ազդեցության տակ: Ոչ միայն երեխաների, այլև մեծերի մոտ մշտապես այս կամ այն չափով զարգանում են մտածական գործունեության բոլոր տեսակները և ձևերը:

**Կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման ռեզերվների մասին**

Հայրենական և արտասահմանյան հոգեբանների և մանկավարժների փորձը համոզում է, որ ժամանակակից 6-10 տարեկան երեխաների նկատմամբ հաճախ կիրառելի չեն այն չափանիշները, որոնցով երեխաների մտածողությունը գնահատվում էր անցյալում: Նրանց մտավոր ընդունակություններն ավելի հարուստ են, քան կարծում էին նախկինում: Փորձերը ցույց են տվել, որ այսօրվա երեխաները կարող են յուրացնել այնպիսի բարդ ծրագրեր, որոնք նախկինում նախատեսված չէին տվյալ տարիքի համար, կամ էլ տրված էին շատ մակերեսորեն: Անհրաժեշտ է ուսուցման պրոցեսը կազմակերպել այնպես, որպեսզի այդ հնարավորությունները ակտիվորեն օգտագործվեն յուրաքանչյուր երեխայի մտավոր համակողմանի զարգացումն ապահովելու համար: Տարրական դպրոցի՝ ներկայումս գործող ծրագրերն առաջին քայլն են հանդիսանում կրտսեր դպրոցականների իրական իմացական հնարավորությունների գործնական օգտագործման ուղղությամբ: Ծրագրերում էականորեն խորացվել ու ընդլայնվել են տրվող գիտելիքների տեսական կողմերը, այսինքն՝ այն, ինչ երևույթների բացատրություն և կապերի հաստատում է պահանջում: Սրա շնորհիվ կրտսեր դպրոցականները ձեռք կբերեն տրամաբանական դատողություններ կատարելու, այսինքն՝ վերացական մտածողության պարզ, բայց կարևոր հնարներ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ նոր նյութի յուրացումը երեխայի «ուժերից վեր է»: Բայց այսպիսի տազնապր մասամբ անհիմն է: Ուսուցման ճիշտ մեթոդիկայի կիրառման և ուսուցչի վարպետության դեպքում երեխաները հաջողությամբ են յուրացնում նոր ծրագրերով նախատեսված նյութը: Նրանք փաստորեն նախապատրաստված են սրա համար իրենց կյանքի ողջ նախկին փորձով:

**Կրտսեր դպրոցականի անձնավորության զարգացումը, բարոյական նորմերի և վարքի կանոնների յուրացումը**

Երեխայի բարոյական դաստիարակությունը սկսվում է դեռևս դպրոց ընդունվելուց շատ առաջ: Բայց միայն դպրոցում է նա հանդիպում բարոյական պահանջների այնպիսի հստակ ու ծավալուն համակարգի, որոնց կատարումը մշտապես և նպատակասլաց կերպով վերահսկվում է: Նորմաների ու կանոնների հստակ ձևակերպումը, ճշտապահության պարտադիր խրախուսումն ու անփութության ու անկարգապահության նկատմամբ ոչ պակաս պարտադիր ու պատշաճ հակազդումը այն կարևոր պայմաններն են, որոնց առկայության դեպքում միայն կրտսեր դպրոցականներին կարելի է դարձնել կարգապահ ու կազմակերպված անձնավորություններ: Տարիքային այդ փուլում կազմավորվելու դեպքում հիշյալ բարոյական որակները դառնում են երեխայի անձի ներքին ու օրգանական ձեռքբերումներ:

**Կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունները միմյանց և ուսուցիչների հետ**

Համատեղ ուսումնական գործունեության ընթացքում երեխաների միջև նոր փոխհարաբերություններ են հաստատվում, որի հետ միասին դպրոցականներից յուրաքանչյուրը սկսում է հանդես բերել իր իսկական անհատական առանձնահատկությունները: Այս տարիքի երեխաները կարող են սեփական կարծիք չունենալ որևէ երևույթի մասին և հենվել դիմացինի արտահայտած կարծիքի վրա: Սա կարող է կարգավորվել չափահասների և հատկապես ուսուցիչների ազդեցությամբ: Ուսուցչի կարծիքը կրտսեր դպրոցականների համար առավել էականն ու անառարկելի է:

**Կրտսեր դպրոցականի հույզերն ու դրանց զարգացումը**

Վարքի նոր կանոնների ու նորմաների յուրացումը էական փոփոխությունների է ենթարկում կրտսեր դպրոցականների հուզական կյանքը: Ուսումնական գործունեության ընթացքում, հոգեկան այլ պրոցեսների նման, փոխվում է նաև երեխաների հույզերի բնույթը: Այդ գործունեությունը կապված է համատեղ գործողություններին ներկայացվող խիստ պահանջների համակարգի, գիտակցական կարգապահության, կամաձին ուշադրության և հիշողության հետ: Այս ամենը ազդում է երեխաների հույզերի վրա: Կրտսեր դպրոցական հասակի ողջ ընթացքում երեխաները սովորում են կառավարել իրենց հույզերը, տրամադրությունը, դրանք դարձնել ավելի գիտակցական: Սակայն որոշ երեխաների մոտ նկատվում են բացասական աֆեկտիվ վիճակներ: Դրանց գլխավոր պատճառը հավակնությունների մակարդակի և դրանց բավարարման հնարավորությունների միջև առաջացող անհամապատասխանությունն է: Եթե այդ անհամապատասխանությունը տևական է, և երեխան միջոցներ չի գտնում դրա հաղթահարման կամ թուլացման համար, ապա բացասական ապրումները կարող են պոռթկալ չար ու կատաղի արտահայտությունների և գործողությունների ձևով: Հուզական այդպիսի շեղումները կանխելու համար ուսուցիչը լավ պետք է իմանա իր սաների անհատական առանձնահատկությունները:

Դպրոցում տարրական կրթության ողջ բովանդակությունը նպատակ ունի երեխաների մեջ դաստիարակել կուլեկտիվիզմ, անձնային և բարոյական որակներ: Այդ որակների դաստիարակության համար վճռական նշանակություն ունի այն, թե երեխաների միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում: Նրանցում անձնական պատասխանատվության զգացում է ծնվում սկզբում առանձին հանձնարարությունների, իսկ հետո նաև դպրոցական բոլոր պարտականությունների կատարման համար:

Այսպիսով, դպրոցում տարվող ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքները հիմնված են երեխաների հոգեկան և անձնային անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության վրա և նպաստում են երեխաների գիտելիքներ ձեռք բերելու, կարողություններ և հմտություններ մշակելու գործընթացին, և, ի վերջո, ձևավորում են երեխաների արժեքային համակարգը:

## **Հետազոտական մաս**

### ***Կիրառված մեթոդների, օգտագործված մեթոդիկաների և կատարված հետազոտության նկարագրությունը***

Կրտսեր դպրոցականի մտածողությունը տարբերվում է նախադպրոցականի մտածողությունից. նախ՝ այս տարիների ընթացքում նրա զարգացման ավելի բարձր տեմպով, երկրորդ՝ ամենաինտելեկտուալ գործընթացներից բխող էական կառուցվածքներով և որակական փոփոխություններով: Կրտսեր դպրոցական տարիքում, դասավանդման ազդեցության տակ, որպես առաջատար գործունեություն, ակտիվորեն զարգանում են բոլոր երեք տեսակի մտածողությունները՝ ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր և բառատրամաբանական(վերացական): Հատկապես զգալի փոփոխություններ են տեղի ունենում վերջին տեսակի մտածողության զարգացման ժամանակ, որը երեխայի կյանքի այս փուլի սկզբում դեռ համեմատաբար վատ է զարգացած, իսկ փուլի ավարտին, այսինքն՝ դեռահասության տարիքի սկիզբին, դառնում է հիմնականը և իր հատկանիշներով մեծապես չի տարբերվում մեծահասակներին բնորոշ մտածողությունից: Այս առումով կրտսեր տարիքի դպրոցականի մտածողության գործնական հոգեախտորոշումը պետք է ուղղված լինի մի կողմից՝ երեխայի բոլոր տեսակի մտածողությունների գնահատմանը, մյուս կողմից՝ բառատրամաբանական մտածողության հատուկ գնահատմանը:

Այս հետազոտությունն իրականացնելու համար ներգրավվել են 6-10 տարեկան դպրոցականներ: Հետազոտության իրականացման համար մեր կողմից ընտրվել են ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր մտածողության ախտորոշման 2 մեթոդիկա՝ «Ռուբիկի կուբիկ»-ը և «Ռավենի մատրիցներ»-ը:

### **«Ռավենի մատրիցներ» մեթոդիկան**

Այս մեթոդիկան նախատեսված է կրտսեր դպրոցականի ակնառու-պատկերավոր մտածողությունը գնահատելու համար: Այստեղ ականառու-պատկերավոր մտածողությունը կապված է տարբեր պատկերների և խնդիրների լուծման ակնառու պատկերացումների հետ: Կոնկրետ առաջադրանքները ներկայացնում են Ռավենի հատուկ ձևով առանձնացված ընտրանք, 10՝ աստիճանաբար ավելի բարդացող մատրիցներ: Երեխաներին առաջարկել ենք միննույն տիպի աստիճանաբար բարդացող 10 մատրիցներ: Ուսումնասիրելով այդ մատրիցների կառուցվածքը, երեխան պետք է նշեր այն մասը (ներքևում գտնվող 8 մասերից մեկը), որը լավագույնս համապատասխանում է այս մատրիցին, այսինքն՝

համապատասխանում է նկարին կամ նկարի՝ ուղղահայաց և հորիզոնական տեղադրված մասերի տրամաբանությանը:

Բոլոր 10 խնդիրները կատարելու համար երեխային տրվել է 10 րոպե ժամանակ: Այս ժամանակի լրանալուն պես փորձարկումը դադարեցվել է, և որոշվել է մատրիցների ճիշտ լուծումների քանակը, ինչպես նաև երեխայի հավաքած միավորների ընդհանուր քանակը (յուրաքանչյուր ճիշտ լուծված մատրիցը գնահատվում է 1 միավոր):

- Եթե երեխայի հավաքած միավորները 10 են, ապա նրա ականոնուպատկերավոր մտածողության մակարդակը համարվում է շատ բարձր:
- Եթե երեխայի հավաքած միավորները 8-9 են, ապա նրա ականոնուպատկերավոր մտածողության մակարդակը համարվում է բարձր:
- Եթե երեխայի հավաքած միավորները 4-7 են, ապա նրա ականոնուպատկերավոր մտածողության մակարդակը համարվում է միջին:
- Եթե երեխայի հավաքած միավորները 2-3 են, ապա նրա ականոնուպատկերավոր մտածողության մակարդակը համարվում է ցածր:
- Եթե երեխայի հավաքած միավորները 0-1 են, ապա նրա ականոնուպատկերավոր մտածողության մակարդակը համարվում է շատ ցածր:

### **«Ռուբիկի կուբիկ»-ը մեթոդիկան**

Այս մեթոդիկան նախատեսված է ակնառու-գործնական մտածողության զարգացման մակարդակն ախտորոշելու համար:

Օգտագործելով հայտնի Ռուբիկի կուբիկը երեխաներին տարբեր աստիճանի բարդության 9 գործնական խնդիրներ ենք առաջադրել և առաջարկել ենք դրանք լուծել սեղմ ժամանակահատվածում (յուրաքանչյուրը՝ 1 րոպեի ընթացքում): Ընդհանուր առմամբ, փորձարկումների համար ծախսվում է 9 րոպե՝ յուրաքանչյուր փորձարկվողի համար:

Յուրաքանչյուր խնդիր ունի իր միավորը՝ կախված բարդության աստիճանից:

- Եթե երեխայի հավաքած միավորները 10 են, ապա նրա ականոն-գործնական մտածողությունը համարվում է շատ լավ զարգացած:
- Եթե բոլոր խնդիրները հատկացված ժամանակում լուծելիս երեխան հավաքում է 4.8-ից մինչև 8.0 միավոր, ապա նրա մտածողությունը համարվում է բարձր զարգացած:



- Եթե երեխայի կողմից հավաքած միավորների ընդհանուր գումար կազմել է 1,5-ից մինչև 3,5 միավոր, ապա նրա ակնառու-գործնական մտածողությունը դիտարկվում է, որպես միջին զարգացած:
- Եթե երեխայի կողմից հավաքված միավորների ընդհանուր քանակը չի գերազանցում 0.8 միավորը, ապա նրա ակնառու-գործնական մտածողությունը թույլ զարգացած է համարվում :

**Հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը**

**Հետազոտության արդյունքները՝ ըստ «Ռավենի մատրիցներ»-ի**

Արդյունքները ներկայացնում ենք ստորև՝ աղյուսակի տեսքով: Աղյուսակի երկու սյունակներում ներկայացված են միավորները(մեծից-փոքր) և կրտսեր 60 դպրոցականների արդյունքները:

**Աղյուսակ 1**

<i>Միավորներ</i>	<i>Դպրոցականներ</i>
10	9
8-9	15
4-7	27
2-3	9
0-1	0
<b>ընդամենը</b>	<b>60</b>

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ 10 միավոր հավաքել են կրտսեր դպրոցականներից 9-ը, 8-9 միավոր հավաքել են 15-ը, 4-7 միավոր հավաքել են 27-ը, 2-3 միավոր հավաքել են 9-ը: 0-1 միավոր չեն հավաքել ոչ ոք:

**Հետազոտության արդյունքները՝ ըստ «Ռուբիկի կուբիկ»-ը մեթոդիկայի**

Արդյունքները ներկայացնում ենք ստորև՝ աղյուսակի տեսքով: Աղյուսակի երկու սյունակներում ներկայացված են միավորները (մեծից-փոքր), և կրտսեր 60 դպրոցականների արդյունքները:

**Աղյուսակ 2**

Միավորներ	Դպրոցականներ
10	0
4.8-8	26
1.5-3.5	20
0-0.8	14
<b>ընդամենը</b>	<b>60</b>

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ 10 միավոր ոչ ոք չի հավաքել: 4.8-8 միավոր հավաքել են կրտսեր դպրոցականներից 26-ը, 1.5-3.5 միավոր հավաքել են 20-ը, 0-0.8 միավոր հավաքել են 14-ը:

Այսպիսով.

*ակնառու-պատկերավոր մտածողությունը բնութագրող թեստից՝*

- ցածր միավորներ է հավաքել 9 կրտսեր դպրոցական
- միջին միավորներ է հավաքել 27 կրտսեր դպրոցական
- բարձր միավորներ է հավաքել 15 կրտսեր դպրոցական
- շատ բարձր միավորներ է հավաքել 9 կրտսեր դպրոցական

*ակնառու-գործնական մտածողությունը բնութագրող թեստից՝*

- ցածր միավորներ է հավաքել 14 կրտսեր դպրոցական
- միջին միավորներ է հավաքել 20 կրտսեր դպրոցական
- բարձր միավորներ է հավաքել 26 կրտսեր դպրոցական
- շատ բարձր միավորներ չի հավաքել ոչ ոք:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացության.

1. Կրտսեր դպրոցականների ո՛չ ակնառու-գործնական, ո՛չ ակնառու-պատկերավոր մտածողությունները գրոյական մակարդակի չեն, սակայն նկատվում է ակնառու-գործնական մտածողության ցածր մակարդակ: Մի քիչ բարվոք է ակնառու-պատկերավոր մտածողության վիճակը;

2. Ե՛վ ակնառու-պատկերավոր, և՛ ակնառու-գործնական մտածողությունը միջին չափով զարգացած է մեծ թվով կրտսեր դպրոցականների մոտ;

3. Կրտսեր դպրոցականները բարձր ցուցանիշներ են գրանցել հատկապես ակնառու-գործնական մտածողության բնութագրիչներով;

4. Սակայն կրտսեր դպրոցականների նույն ակնառու-գործնական մտածողության շատ բարձր ցուցանիշի բացակայություն է գրանցվել, իսկ ակնառու-պատկերավոր մտածողության բարձր ցուցանիշներ, այնուամենայնիվ, գրանցվել են;

5. Ակնառու-գործնական մտածողության խիստ պակասը կրտսեր դպրոցականները կարճ ժամանակում կարողանում են հասցնել բարձր մակարդակի, սակայն ակնառու-պատկերավոր մտածողության գոնե միջին մակարդակ պետք է ունենալ դրա համար: Ակնառու-պատկերավոր մտածողության միջին մակարդակը, սակայն, հետո էլ մեծ տեմպերով չէ, որ զարգանում է:

Սա, իհարկե, վերջնական, հաստատուն չափանիշ համարել չի կարելի, քանի որ մենք գործ ունենք երեխաների հետ, ովքեր տարիքային առանձնահատկություններից բացի ունեն նաև խիստ անհատական առանձնահատկություններ, ինչի շնորհիվ մենք կարող ենք թեստերի արդյունքների մեջ ունենալ հետաքրքիր փոփոխություններ:

Կրտսեր դպրոցականի հոգեկանի զարգացման ամբողջական պատկերն ունենալու համար անհրաժեշտ է նմանատիպ հետազոտությունների ենթարկել նաև հոգեկան մյուս պրոցեսները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ընդհանուր հոգեբանություն / Ա. Վ. Պետրովսկու խմբ., Երևան, Լույս, 1974, 544 էջ:
2. Հոգեբանություն / Ա.Գ. Կովալյովի, Ա. Ա. Ստեպանովի, Ա. Ն. Շաբալինի խմբ., Երևան, ԵՀՀ, 1970, 595 էջ:
3. Антонова И.П. Особенности развития мышления и памяти у детей шести лет в процессе обучения. М., 1986.
4. Крайг Г. Психология развития / Г. Крайг. - СПб.: Питер, 2001. – 992 с.
5. Крейн У. Теория развития. Секреты формирования личности / У. Крейн. - 5-е международное изд. - СПб.: прайм-ЕВРОЗНАК, 2002. – 512 с.
6. Лейтес Н.С. Возрастная одаренность и индивидуальные различия / Н.С. Лейтес. – М.: Издательство «Институт практической психологии», Воронеж:НПО «МОДЭК», 1997. – 448 с.
7. Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество: учеб.для студ. Вузов / В.С. Мухина. – 6-е изд., стереотип. – М.:Издательский центр «Академия», 2000. – 456 с.
8. Немов Р. С. Психология, Книга 3, Москва, ВЛАДОС, 2002, 631 с.
9. Особенности психического развития детей 6-7-летнего возраста / Науч.-исслед. ин-т. Общей и педагогической психологии Акад. пед. Наук СССР;под ред. Д.Б. Эльконина, А.Л. Венгера. – М.: Педагогика, 1988. – 136 с.
10. Психическое развитие младших школьников: Экспериментальное психологическое исследование / под ред. В.В Давыдова; Науч.-исслед. ин-т общей и педагогической психологии. – М.: Педагогика, 1990. – 160 с.